ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՂՈՒԹԸ
(Նոր Նախիջևանի հիմնադրման 200-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Նոր պատմության շեմին, Կովկասի նախագոներում հիմնադրված Նոր Նախիջևանը Ռուսաստանի խոշոր հայկական գաղթավայրերից էր։ Նա գոյատևվել է շուրջ մեկուկես դար։

XVIII դարի երկրորդ կեսին, Եկատերինա II-ի թագավորության շրջանում (1762—1796), որդեգրվեցին կայսրության հարավային սահմանները ընդարձակելու և ծով դուրս գալու՝ դեռևս դարասկզբին Պետրոս Մեծի կողմից կյանքի կոչված քաղաքականության սկզբունքները։ Այդ ասպարեզում էական նշանակություն ունեցավ 1768—1774 թթ. ռուս-թուրքական առաջին պատերազմը, որի հաջող ավարտի շնորհիվ Ռուսաստանը կարողացավ Ղրիմի թաթարական խանությունը Թուրքիայից անջատել և անկախ հայտարարել, ամրապնդել իր դիրքերը Սև ծովի առափնյա շրջաններում։

Հարավի կամ Նովոռոսիայի դրեթե անմարդաբնակ տափաստանները բնակեցնելու, ինչպես նաև Տավրիկյան թերակղզին կայսրությանը միացնելու նպատակով կազմակերպվում է Ղրիմի հայ և հույն բնակչության գաղթը։ Դա հարավային Ռուսաստանը բնակեցնելու, այն տնտեսապես յուրացնելու և Սև ծով դուրս գալու համար տարվող ընդհանուր քաղաքականության դրսևորումներից մեկն էր։

1778 թ. ամռանը գեներալ Ա. Վ. Սուվորովի գլխավորությամբ, որը XVIII դարի վերջին քառորդում քանիցս առիթ ունեցավ զբաղվելու Հայաստանի ու հայերի հարցով[1]*, Ղրիմի հայաբնակ վայրերից կազմակերպվում է 12.600 հայերի գաղթ։ Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի համաձայն ղրիմահայերը Դոն գետի ափին, Դմիտրի Ռոստովսկու ամրոցի (այժմյան Դոնի Ռոստով քաղաքի) մոտ հիմնում են Նոր Նախիջևան քաղաքը, իսկ նրա շրջակայքում՝ Զալդր, Թոփտի, Մեծ Սալա. Սուլթան Սալա և Նեսվիտա հայկական գյուղերը։*

Հրովարտակը[2] *կայսերական կարևոր փաստաթուղթ էր, որը սահմանում էր նորահաստատ գաղութի իրավասությունը և մեծապես կանխորոշում նրա զարգացման հեռանկարները։ Նրա համաձայն ղրիմահայերը տասը տարով ազատվում էին բոլոր տեսակի հարկերից։ Գյուղական բնակչության յուրաքանչյուր հարկատու շնչի տրվում էր 30 դեսյատին հողամաս։ Ամբողջ հայ դանգվածին հատկացվում է 87.000 դեսյատին տարածություն։ Նորաբնակ-*

---

1 *Տե՛ս* М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. 1, Ереван, 1956, *էջ 7—117* (А. В. Суворов и русско-армянские отношения в 1770—1790 годах).

2 *Ռուսերեն և հայերեն լեզուներով գրված, շքեղ կազմի մեջ ամփոփված, հրովարտակն այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։*

ները ազատվում էին զորքին օթևան և պարեն հատկացնելու (постой) պարտավորությունից և զինակոչությունից (рекрут)։ Նրանց իրավունք էր վերապահվում երկրի ներսում և նրա սահմաններից դուրս ազատ առևտուր անել, մրգատու այգիներ գցել, գործարաններ ու ֆաբրիկաներ հիմնել։ Մի խոսքով, խրախուսվում էր առևտրի, երկրագործության, արհեստների ու արդյունաբերության զարգացումը՝ նորաբնակների ցանկություններին և ունակություններին համապատասխան։ Շնորհագրի չորրորդ կետով նորաբնակներին տրվում էին դավանանքի ազատություն, թույլատրվում կառուցել եկեղեցիներ, ազատորեն կատարել հայոց եկեղեցական ծիսակատարությունները՝ ենթարկվելով Էջմիածնի մայր Աթոռի հոգևոր գերիշխանությանը։

Հատկանշական է, որ Նոր Նախիջևանի հիմնադրման արարողությունները վերածվում են ռուս-հայկական բարեկամության հանդեսի։ Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հ. Արղությանի կողմից քաղաքի հիմնադրման հանդեսին հրավիրված էին Դմիտրի Ռոստովսկու ամրոցի կայազորի պետ Ս. Գուրևը, Դոնի հեծելազորը և զինվորական նվագախումբը։ Հրաղենի որոտալից համազարկերով ազդարարվում է հայկական նոր բնակավայրի հիմնադրումը։

Կայսերական շնորհագրի ընձեռած հնարավորությունների շրջանակներում և նրա հիման վրա ձևավորվում է նորահաստատ գաղութի ինքնավարությունը։ Ամենից առաջ կազմակերպվում է հայկական մագիստրատը, որն իրականացնում էր քաղաքի և գյուղերի դատական, ոստիկանական և գործադիր իշխանության ֆունկցիաները։ Հայ հասարակության բոլոր խավերի կողմից երեք տարի ժամանակով մագիստրատում ընտրվում էին հինգ դատավորներ։ Դատավարությունը և գործավարությունը կատարվում էր հայերեն լեզվով, Աստրախանի կամ «Հայկական դատաստանագրքի» հիման վրա[3], որը ճանաչվել էր պետության կողմից և Նոր Նախիջևանից բացի կիրառվել նաև Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի գաղութներում։ Հայկական գյուղերը, մագիստրատի ղեկավարությանը ենթակա լինելով հանդերձ, ունեցել են իրենց կառավարման տեղական օրգանները՝ հանձին ավագի և ծերերի խորհրդի, որոնք ընտրվում էին տվյալ գյուղի հասարակության կողմից։ Այսպիսով, Դոնի հայկական զանգվածը, օգտվելով շնորհագրով իրեն վերապահված արտոնություններից, ստեղծեց ազգային լեզվով ու իրավական նորմերով առաջնորդվող իր ներքին կառավարչությունը։ 1811 թ. հաստատվում է Դոնի հայկական գաղութի դերը, ուր պատկերված էին հայերի աշխատասիրությունը խորհրդանշող մեղուներ ու փեթակներ։

Քաղաքը հիմնադրվում է պլանաչափ կարգով, նախապես մշակված նախագծի համաձայն։ Նրա կենտրոնական մասում առանձնացվում է ընդարձակ քառակուսի հրապարակ, որի երկու կողմերում հիմնվում են խանութներ և գործատներ։ Փողոցները կառուցվում են ուղղաձիգ դիրքով և իրար խաչաձևելով ստեղծում են հավասար մեծության քառակուսի թաղամասեր։

XVIII դարի վերջին քառորդում ազատագրական շարժումների աշխուժացման, Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու ակնկալությունների շրջանում Դոնի ափերին զուտ հայաբնակ քաղաքի և հինգ հայկական գյուղերի հիմնադրումը, հայ զանգվածին

3 Տե՛ս Ֆ. Պողոսյան, Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, Երևան, 1967։

տրված լայն ինքնավարությունը, Դոնի գաղութը ցարական պաշտոնական վավերագրերում «Նոր Նախիջևանի օկրուգ» կամ ուղղակի «Հայկական օկրուգ» անվանվելը մեծ տպավորություն էր գործում ժամանակի հայության վրա։ Նոր Նախիջևանում հայկական ինքնուրույն կյանքը վերականգնելու, հայկական մշակույթը զարգացնելու հույսեր էին ծնվում։ Այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայ ազատագրական շարժման ավանգարդում ընթացող հնդկահայերի կողմից Նախիջևանում հայկական դպրոց հիմնելու նպատակով մեծաքանակ նվիրաբերություններ կատարելը[4], ռուսահայ գործիչների կողմից Լազարյան ճեմարանը Մոսկվայի փոխարեն Նոր Նախիջևանում հիմնելու մտահղացումը և այդ առթիվ սկսված բանակցությունները[5], Խալդարյանի հայկական տպարանը Պետերբուրգից Նոր Նախիջևան տեղափոխելու իրողությունը[6] և այլ փաստեր։

Օգտվելով Դոնի ավազանի առևտրատնտեսական նպաստավոր պայմաններից՝ հայ զանգվածը կարճ ժամանակում նկատելի հաջողությունների է հասնում գյուղատնտեսության, արհեստների, արդյունաբերության և առևտրի զարգացման մեջ։ Գաղութի կազմավորման շրջանից թե՛ երկրագործությունը, թե՛ արդյունաբերությունը խարսխվում էին ազատ վարձու աշխատանքի վրա և մեծ չափով ազատ մնում ճորտատիրական կապանքներից։ Դա կարևոր հանգամանք էր, որն իր գրոշմը դրեց և մեծապես ուղենշեց հայ ինքնավար համայնքի զարգացման հետագա ամբողջ ընթացքը։

Գյուղատնտեսության ճյուղերի մեջ առաջատար տեղ ուներ հացահատիկային կուլտուրաների, մասնավորապես ցորենի մշակումը, որի համար Դոնի հարթավայրի արգավանդ հողերը լայն հնարավորություն էին ընձեռում։ Նոր Նախիջևանում հաջողությամբ զբաղվում էին նաև այգեգործությամբ, հատկապես խաղողագործությամբ (որը բավական մեծ տարածում էր գտել) և շերամապահությամբ, որի առաջին ձեռնարկողները հայերն էին։

Հայկական գաղութում նկատելի հաջողության հասավ նաև արհեստագործությունը, ինչպես և արդյունաբերությունը։ Գաղութի հիմնադրման առաջին տարիներից արհեստները երևան են եկել բավականաչափ մասնագիտացված ձևով։ Արտադրության այս ճյուղից զարգանում էին հատկապես կոշկակարությունը, թամբագործությունը, դարբնությունը, պայտառությունը և առանձնապես հայերի համար ավանդական դարձած ոսկերչությունն ու արծաթագործությունը։ Հայ ոսկերիչներն ու արծաթագործները հռչակված էին իբրև նրբաճաշակ իրեր ու զարդեր պատրաստող վարպետներ։ Պատահական չէ, որ Տագանրոգի քաղաքապետի 1850 թ. տարեկան հաշվետվության մեջ նշվում է, որ Նախիջևանի հայ վարպետների պատրաստած արծաթազարդ զենքերի, սանձերի մի քանի հիանալի նմուշներ նախատեսված են ուղարկելու Լոնդոնի համաշխարհային ցուցահանդես[7]։

Դոնի հայ արհեստավորներն ունեցել են ավանդական ուժ ձեռք բերած, ազգային սովորությունների վրա հենվող սեփական համքարություններ, որոնք ռուսական միջավայրի ազդեցությունը կրելով հանդերձ, իրենց ներքին կա-

4 «Հյուսիսափայլ», 1859, № 5, էջ 385—393։

5 Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 104, գ. 4, վ. 3։

6 Նույն տեղում, Կաթողիկոսական դիվան, թ. 6, վ. 18։

7 ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև ՍՍՀՄ ԿՊՊԱ), ֆ. 1281, ց. 5, գ. 60, թ. 21։

ռուցվածքով, վարք ու բարքով հար և նման են եղել Անդրկովկասի հայ համքարություններին[8]։

Արհեստներին զուգահեռ ու նրանց կողքին հիմնվում են արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք սկզբնական շրջանում քիչ էին տարբերվում արհեստավորական գործատներից։ Սակայն XIX դարի 30—40-ական թթ. նրանց սահմանազատումը ակնբախ է դառնում։ Արդյունաբերության մեջ աստիճանաբար դրսևորվում են կապիտալիստական արտադրությանը բնորոշ հատկանիշներ։

Գաղութի հայ առևտրական բուրժուազիան (Խալիբյան, Հայրապետյան, Օդաբաշյան, Ալաջալյան, Պոպով, Հովհաննիսյան և ուրիշներ), արդյունաբերության որոշ ճյուղերի եկամտաբերությունից մղված, իր կապիտալի զգալի մասը ներդնում է ճարպի, բրդի, օղու, կաշվի, մետաքսի, ծխախոտի, աղյուսի և շահութաբեր այլ ճյուղերի արտադրության մեջ։

Նոր Նախիջևանում մեծ զարգացում ապրեց մանր եղջերավոր անասուններից գործարանային պայմաններում ճարպ ստանալու եկամտաբեր գործը։ Ուրիշ քաղաքներում նման գործարանների (սալղանների) բացակայության պատճառով Հյուսիսային Կովկասից, Դոնի տափաստաններից և այլ վայրերից ճարպատու ոչխարի հոտերը քշում էին Նախիջևան։ Շուտով հայ վաճառական-արդյունաբերողները ճարպահալ գործարաններ հիմնեցին նաև Ստավրոպոլում, Պյատիգորսկում և այլ վայրերում։ Ճարպը գրեթե ամբողջությամբ առաքվում էր արտասահման։ 1865 թ. Նոր Նախիջևանի տասնմեկ սալղաններում ստացվել է 240.750 ռ. արժողության ճարպ[9]։ 1882 թ. Նախիջևանի գործարանները տվել են 200.000 փութ ճարպ։[10]։

Նոր Նախիջևանը աչքի էր ընկնում նաև բրդի արտադրությամբ։ Հայ արդյունաբերողները Դոնի ափին հիմնել էին բրդալվաց ձեռնարկություններ, որտեղ տարեկան շուրջ 200—250 հազար փութ բուրդ նախնական մշակման էր ենթարկվում և առաքվում արտասահման։ Բրդալվաց ձեռնարկություններից հայտնի էր մասնավորապես Մելքոնով-Եղոկով արտադրական-առևտրական հնագույն ֆիրման, որի արտադրանքը բարձր էր գնահատվում և լայն սպառում գտնում հատկապես Ամերիկայում[11]։

Դոնի հայկական գաղութը իր ներփակ կյանքով ու համեստ հնարավորություններով չէր խթանում խոշոր արդյունաբերության զարգացմանը։ Այդ պատճառով էլ գաղութի խոշոր առևտրա-արդյունաբերողներն իրենց կապիտալները ներդնում և ձեռնարկությունները հաստատում էին տնտեսական-արդյունաբերական անհամեմատ ավելի լայն պայմաններ ընձեռող Ռոստով քաղաքում և այլ խոշոր կենտրոններում[12]։ Այս ամենով հանդերձ Նոր Նախիջևանում ևս արագորեն զարգանում էր արդյունաբերությունը, գերազանցա-

---

8 Տե՛ս Վ. Բարխուդարյան, Նոր Նախիջևանի համքարությունները («Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 1)։

9 Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (ՀԿՊՊԱ), ֆ. 139, գ. 1200, թ. 9։

10 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1152, ց. 10, գ. 20, թ. 2։

11 Տե՛ս «Сборник областного войска Донского Статистического комитета», вып. II, Новочеркасск, 1901, էջ 27։

12 Այսպես օրինակ, տակավին 1850-ական թթ. Ռոստովում հիմնադրվում է Հակոբ Քուշնարյանի՝ ամբողջ Ռուսաստանում և արտասահմանում հայտնի դարձած ծխախոտի ֆաբրիկան։

պես գյուղատնտեսական մթերքները նախնական մշակման ենթարկող մանր արտադրությունը։ 1870 թ. Նախիջևանում կար 35 փոքր ձեռնարկություն, որոնցում աշխատում էր 500 բանվոր[13]։ 1903 թ. արդեն քաղաքի ֆաբրիկա-գործարանների թիվը հասնում էր 73-ի, որոնցում աշխատում էր ավելի քան 3500 բանվոր և տարեկան ստացվում էր 3 միլիոն ռուբլուց ավելի արտադրանք[14]։ Վ. Ի. Լենինը Եվրոպական Ռուսաստանի ֆաբրիկագործարանային արդյունաբերության կարևորագույն կենտրոնների շարքում է դասում նաև Դոնի Նախիջևան, Նովոչերկասկ և Ռոստով քաղաքները[15]։

Նոր Նախիջևանի հայկական գաղութը առևտրի համար ուներ աշխարհագրական հարմար դիրք և բնական նպաստավոր պայմաններ։ Այն գտնվում էր ցամաքային և ջրային խոշոր ուղիների հանգույցում, որոնք ոչ միայն հարավային, այլև ամբողջ Ռուսաստանի համար բացառիկ կարևորություն ունեին։ Դոնի հայերը առևտրական գործառնությամբ մի կողմից կապվում էին Հյուսիսային Կովկասի և կենտրոնական Ռուսաստանի հարուստ նահանգների, մյուս կողմից՝ Ազովի և Սև ծովերի միջոցով, արտասահմանյան երկրների հետ։

Արտաքին առևտրի գլխավոր ճյուղերից էր ցորենավաճառությունը։ Հայ առևտրականները չէին բավարարվում հայկական գյուղերի ցորենի վաճառքով։ Նրանք Ռուսաստանի կենտրոնական նահանգներում և Կուբանում մեծաքանակ հացահատիկ էին գնում և վաճառում ցորենի արտահանությամբ զբաղվող առևտրականներին կամ ուղղակի առաքում արտասահման։ Քաղաքի հյուսիսային կողմի ընդարձակ տարածքի վրա նրանք երկու տասնյակից ավելի խոշոր ամբարներ էին կառուցել, իսկ Հայրապետյան եղբայրները հացահատիկի հատուկ շտեմարաններ ունեին Տագանրոգում։

Եկատերինոսլավի նահանգապետի 1882 թ. զեկուցագրում կարդում ենք հետևյալը. «Հացահատիկի առևտրում Նախիջևանը շուկա է հանդիսանում հարավային Ռուսաստանում։ Նրա տարեկան շրջանառությունը անցնում է մեկ միլիոն չետվերտից։ Նախիջևանում գործող 15 ճարպահալ գործարաններում տարեկան արտադրվում է 200.000 փութ ճարպ, իսկ 3 բրդալվաց ձեռնարկություններում լվացվում և տեսակավորվում է 300.000 փութ ռուսական բուրդ»[16]։ Ապա նշելով, որ այդ մթերքները առաքվում են արտասահման, նահանգապետը առաջարկում է Նախիջևանի նավամատույցը վերակառուցել՝ համապատասխանեցնելով առևտրի ծավալներին։

Ի տարբերություն երկրամասի քաղաքների, Նոր Նախիջևանը հայտնի էր հատկապես իր զարգացած ներքին առևտրով։ Այսպես, օրինակ, եթե 1850-ական թթ. Տագանրոգում կար 279 առևտրական կրպակ, Եկատերինոսլավում՝ 216, Ռոստովում 211, Բախմուտում՝ 143, ապա Նոր Նախիջևանում դրանց թիվը հասնում էր 368-ի[17]։

Նորնախիջևանցիների առևտրական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ ուներ Հյուսիսային Կովկասը։ Ստավրոպոլում, Եկատերինոդարում

---

13 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1284, թ. 1871, գ. 169, թ. 62։

14 Ռոստովի մարզի պետական արխիվ (ՌՄՊԱ), ֆ. 91, ց. 4, գ. 78, թ. 1։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 789։

16 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1152, ց. 10, գ. 20, թ. 2։

17 Տե՛ս Материалы для географии и статистики России, Екатеринославская губерния, СПб, 1862, էջ 216։

(Կրասնոդար), Պյատիգորսկում, Գեորգիևսկում, Մոզդոկում և այլ վայրերում նախիջևանցիները իրենց խանութներն ու կրպակներն ունեին և ամբողջ տարին մանուֆակտուրային ապրանքների, արդուզարդի, մորթու, կաշվեղենի և այլ ապրանքների աշխույժ առևտուր էին անում։ Նրանք առևտրական գործունեությամբ կապված էին ոչ միայն Ռոստովի, Նովոչերկասկի, Տագանրոգի, այլև Մոսկվայի, Նիժնի Նովգորոդի, Աստրախանի, Խարկովի և այլ քաղաքների հետ։

Նոր Նախիջևանի զարգացման շեշտված առանձնահատկություններից մեկն էլ եղել է սոցիալ-դասակարգային հակամարտությունը, որը դրսևորվել է եկեղեցական գումարների, հասարակական միջոցների տնօրինման և այլ խնդիրների շուրջը, սակայն սոցիալական պայքարը առանձնակի սրությամբ արտահայտվել է հատկապես հողային հարցում։ Անցյալ դարի 30-ական թթ. զարգացման վաճառականական վերնախավերի և հայկական գյուղերի միջև հողի համար առաջացած համառ ու երկարատև պայքարը փաստորեն պայմանավորված էր ապրանքադրամական հարաբերությունների զարգացմամբ։ Հայկական գյուղերին պատկանող հանրային հողերը յուրացնելու ձգտող Նոր Նախիջևանի կալվածատիրական-վաճառականական շերտերի դեմ պայքարի ընթացքում հայ երկրագործները կարողացան պաշտպանել իրենց հողային իրավունքները։ 1848 թ. հունիսի 14-ին պետական խորհուրդը հարցը վճռում է հայ երկրագործների օգտին, վերականգնում նրանց հողային իրավունքները[18]։ Ընդսայած դրան, քաղաքի աղաները շարունակում էին տարբեր պատրվակներով օգտվել հայկական գյուղերին պատկանող հասարակական հողերից։

Ժամանակի ընթացքում կառուցվում ու բարեկարգվում է Նախիջևանը։ Ինչպես քաղաքը, այնպես էլ բովանդակ հայկական զարգացումը ոչ միայն մինչև անցյալ դարի կեսերը, այլև դրանից հետո էլ պահպանում էր իր էթնիկական նկարագիրն ու ազգային յուրահատկությունները։ Հարավային Ռուսաստան այցելած նշանավոր գործիչների վրա մեծ տպավորություն էր գործում հայկական քաղաքը, Դոնի հայության ինքնատիպ նկարագիրը։

Հայրենական պատերազմի հերոս, գեներալ Ն. Ռաևսկին 1820 թ. Ա. Ա. Պուշկինի հետ այցելում է Նոր Նախիջևան և իր օրագրում գրանցում. «Ամբողջի մյուս կողմը կա մեկ ուրիշ արվարձան կամ Նախիջևան անվանվող հայկական քաղաք՝ ընդարձակ, բազմամարդ և առևտրով խիստ հարուստ։ Կենցաղով, կառուցումներով, դեմքերով, հագուստով, ամեն ինչով ինքնատիպ է»[19]։

Ֆրանսիացի նշանավոր երկրաբան Հոմեր դը Նելը 1849 թ. ճանապարհորդել է Նովոռոսիայում և իր ուղեգրության մեջ Նախիջևանի ու նրա բնակիչների մասին գրել է. «Աշխատասեր և բանիմաց են, ճարտարարվեստ, խելացի, խնայող, ամենուր եկամտի աղբյուր են գտնում և ուր որ հաստատվում են՝ իրենց ներկայությունը վաճառականություն է ծնում... Ոչ մի բան չի վրիպել նրանց վառվռուն աչքերացությունից։ Նրանք արդյունագործության բոլոր տեսակները լայնորեն մշակում են։ Նրանք չեն բավարարվում տեղական առևտրով. ամբողջ հարավային Ռուսիայի մեջ առնավաճառ չի լինի, որ նախիջևանցին իր ապրանքը այնտեղ վաճառքի չհանի...։

Ինչ վերաբերում է հայկական սովորություններին, ապա հայերը, ինչպես կան ուրիշ տեղերում, այստեղ էլ նույնն են։ Նրանք կարող են փոխել երկիրը,

18 ՌՍՊԱ, ֆ. 579, ց. 1, գ. 235, թ. 81—83։
19 Архив Раевских, т. I, СПб, 1908, էջ 520։

տարազը, սակայն նրանց բարքերը և սովորությունները ոչ մի փոփոխության չեն ենթարկվում»[20]։

Ռուսահայ գաղթավայրերը և առաջին հերթին Նոր Նախիջևանը XVIII դարի վերջերին և XIX դարի առաջին տասնամյակներին նշանակալից դեր կատարեցին ռուս և հայ ժողովուրդների հոգևոր շփումների ու փոխճանաչման, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանը պարսկա-թուրքական բռնատիրությունից ազատագրելու գործում։ Այդ առումով կարևոր էր Պետերբուրգից Նախիջևան տեղափոխած Խալդարյան տպարանի դերը։ Իր հրատարակությունների միջոցով տպարանը նպաստում էր հայերին ռուսաց պատմությանն ու կուլտուրային ծանոթացնելու, նրանց մեջ ռուսական կողմնորոշումը ամրապնդելու խնդրին։

Անհրաժեշտ է նշել, որ բուն Հայաստանում ծանոթ էին Ռուսաստանում հանդրվանած հայկական զանգվածների դրությանը։ Վերջիններիս բարվոք վիճակը ազդու օրինակ էր օտարի տիրապետության տակ հեծող հայ ժողովրդի համար։ Այդ լուծը թոթափելու և Ռուսաստանի հովանու տակ անցնելու հակումն ուժեղանում էր ժողովրդի մեջ։ Հատկանշական է, որ 1826 թ., ռուս-պարսկական պատերազմի ժամանակ, ռուսահայ թեմի առաջնորդը Ն. Աշտարակեցուն խորհուրդ էր տալիս ջանալ ամեն կերպ հաջողացնելու հայերին տրված կայսերական առանձնաշնորհումների վերահաստատումը, որպեսզի բոլորն իմանան, թե Ռուսաստանում բնակվող հայերը ինչպիսի նշանակալից արտոնություններից են օգտվում[21]։ Մյուս կողմից, Դոնի ափերին հանդրվանած հայերը, տեղյակ լինելով Հայաստանում տիրող իրավիճակին, ոչ միայն անտարբեր չեն եղել հարազատ ժողովրդի ճակատագրի նկատմամբ, այլև ակտիվ արձագանքել են այնտեղ կատարվող իրադարձություններին։

Բնորոշ է, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու լուրը Թիֆլիսի, Ասարխանի, Հնդկաստանի հայության հետ, մեծ բերկրանքով ընդունեցին նաև նորնախիջևանցիները։ Այդ առթիվ Դոնի հայ հասարակության անունից քաղաքագլուխ Խաչատուր Խամաճյանը ինը հեղինակավոր քաղաքացիների հետ Հայաստան հղած ուղերձում ջերմորեն շնորհավորում է հայրենակիցներին «Արարատյան երկրի» ազատության առթիվ. «Զորս փրկեցեալ ի ներքուստ ձեռաց բարբարոսաց»[22]։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո էլ Դոնի հայ համայնքը շարունակեց սերտ կապերի մեջ մնալ Հայաստանի հետ, ակտիվորեն արձագանքել հայ իրականության հրատապ խնդիրներին։ Պատերազմների, բնական աղետների և այլ արհավիրքների պատճառով տուժած հայրենակիցներին մշտապես օգնության ձեռք են մեկնել նորնախիջևանցիները։ Ավելին, աստիճանաբար ընդարձակվում, բազմերանգ են դառնում ու խորանում հայ իրականության հետ ունեցած մշակութային ու հասարակական կապերը։ Հայրենիքի նկատմամբ հետաքրքրությունը, նրա կյանքով ապրելը իր հայրենակիցների՝ Դոնի հայության մեջ մշտապես արթուն ու վառ պահելու գործում խոշոր էր, մասնավորապես, հայ անվանի գրող Ռ. Պատկանյանի

20 «Բազմավեպ», 1870, հատ. 28, էջ 266—267։
21 Մաշտոցի անվ. Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թ. 53, վ. 163։
22 Նույն տեղում, թ. 55, վ. 73։

ղերը։ Նրա հայրենասիրական, ազատաշունչ ստեղծագործությունները լայն արձագանք էին գտնում տեղի երիտասարդության մեջ։

Դոնի հայկական զանգվածը միաժամանակ աշխուժորեն արձագանքել ու մասնակցել է Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններին։ Թերևս այն պատճառով, որ Նոր Նախիջևանի գաղութը ձևավորվեց ոչ թե տարերայնորեն, այլ կազմակերպված, ազնության հովանու ներքո, հիմնադրումից անմիջապես հետո ինչպես տնտեսական, այնպես էլ մանավանդ հասարակական-քաղաքական կյանքում գաղութը հանդես է գալիս բավական հասուն ու ակտիվ ձևով։ Այդ երևույթը, առաջին հերթին դրսևորվում էր երկրին սպառնացող արտաքին վտանգների, օտարերկրյա պետությունների դեմ մղվող պատերազմների ժամանակ։ Տակավին Նոր Նախիջևանի հիմնադրման առաջին տասնամյակում՝ 1788 թ. տեղի հայ համայնքի նշանավոր դեմքերից մայոր Հովհաննես Աբրահամյանի (Իվան Աբրամովի) ջանքերով հայ և ուկրաինացի կամավորներից ստեղծվում է 224 հոգուց բաղկացած մի ջոկատ՝ 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմում, ռուսական զորքերի հետ թուրքական բանակի դեմ կռվելու համար[23]։

Դոնի հայ հասարակության հայրենասիրական ձգտումները դրսևորվել են հատկապես 1812 թ. Հայրենական պատերազմի ժամանակ։ 1812 թ. ամռանը, երբ հայրենիքի պաշտպանության համար շատ նահանգներում սկսվում է կամավորական գնդերի ստեղծումը, մագիստրատի գլխավորությամբ Նախիջևանից և հայկական գյուղերից կամավորների հավաքագրում է կատարվում։ Նրանցից առանձին աշխարհազորային խմբեր կազմակերպելու և վարժեցնելու գործը հանձնարարվում է վերոհիշյալ Աբրամովի որդուն՝ մայոր Մկրտիչ Աբրամովին[24]։ Հայկական գաղութը դրամական և նյութական զգալի նվիրաբերություն է կատարում բանակի օգտին։ Իրենց նոր հայրենիքի փոթորկալից իրադարձություններով ապրելու, նրա դժվարությունները սրտամոտ ընդունելու պերճախոս վկայություն է նաև հետևյալ փաստը. 1812 թ. սեպտեմբերի ծանր օրերին, երբ Նապոլեոնի բանակը դրավել էր Մոսկվան, Նոր Նախիջևանի մագիստրատը հատուկ հրամանով արգելում է զվարճությունները։ Ավելին, մագիստրատը հատուկ մարդ է նշանակում այդ որոշումը խախտողներին պատժելու համար[25]։ Պատերազմի հաղթական ավարտից հետո Դոնի հայ հասարակությունը քաղաքագլուխ Վարդերես Հալաջովին ընտրում է պատգամավոր և ուղարկում Պետերբուրգ՝ հաղթանակի առթիվ մայրաքաղաքում կազմակերպվող հանդեսներին մասնակցելու համար[26]։

Դոնի հայկական գաղութը գործոն մասնակցություն է ունեցել Ղրիմի 1853—1856 թթ. պատերազմին։ Հայ համայնքը իր միջոցներով պատրաստում է 10.500 փութ պաքսիմատ և նվիրում բանակին[27]։ Հայ գյուղացիները իրենց ավելի քան 400 սայլերով ձմռանը Ռոստովից և Տագանրոգից պարենամթերք են տեղափոխում և հասցնում գործող բանակին։ Նախիջևանի և հայկական

23 Տե՛ս М. Г. Нерсисян, Армянские волонтеры в русско-турецкой войне 1787—1791 гг. «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3։

24 Տե՛ս М. Г. Нерсисян, Отечественная война 1812 г. и народы Кавказа, Ереван, 1965, էջ 196—197։

25 Նույն տեղում, էջ 198—199։

26 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8815, թ. 582։

27 ՀԿՊՊԱ, ֆ. 139. գ. 91, թ. 19—20։

գյուղերի բնակչությունը իր տարածքով անցնող զորքերին ապահովել է սնունդամթերքով, քաղաքի ուսումնարանի շենքը վերածել զինվորական հիվանդանոցի[28]։ Հայկական գաղութի հայրենանվեր վերաբերմունքն այնքան ակնառու է եղել, որ բազմիցս արժանացել է դրվատանքի ու կառավարական պարգևների։

Նոր Նախիջևանի հայկական գաղութը ջերմորեն արձագանքում էր նաև Ռուսաստանի մշակութային կյանքի կարևոր իրադարձություններին։ 1899 թ., երբ նշվում էր Ա. Ս. Պուշկինի ծննդյան 100-ամյակը, Նախիջևանում կազմակերպվում է հանդիսավոր հավաք և ներկայացում՝ բանաստեղծի ստեղծագործություններից։ Քաղաքի 12 ուսումնարանների բոլոր աշակերտներին նվիրվում է Ա. Պուշկինի հոբելյանական հրատարակության մեկհատորյակը։ Պոետի հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքային գրադարանը կոչվում է նրա անունով[29]։ 1909 թ. Լ. Ն. Տոլստոյի ծննդյան 80-ամյակի օրերին Դոնի հայ հասարակության անունից ողջույնի հեռագիր է ուղարկվում Յասնայա Պոլյանա և որոշվում հաջորդ տարվանից Նախիջևանում բացել մեծ գրողի անունը կրող երկսեռ ուսումնարան[30]։

Մեծ էր Ռուսաստանի, մասնավորապես նրա խոշոր կենտրոնների՝ Մոսկվայի, Պետերբուրգի, Դորպատի դերը Նախիջևանի և մյուս գաղութների լուսավորական, հասարակական-քաղաքական կյանքում։ Ղրիմի պատերազմին հաջորդած ժամանակաշրջանում գաղափարական աշխույժը ընդգրկեց նաև ռուսահայ շրջանները և առաջին հերթին Դոնի հայկական գաղութը։ Ռուսաստանի կենտրոնների հասարակական կյանքի ոլորտում հայ ուսանողությունը և առհասարակ երիտասարդությունը հաղորդակից է դառնում ժամանակի առաջավոր գաղափարներին և ջանում դեմոկրատական այդ գաղափարների լույսով ներազդել ռուսահայ զանգվածների հասարակական-քաղաքական կյանքի վրա։

Նոր Նախիջևանից դուրս եկած այդ երիտասարդության մեջ առաջինը պետք է հիշատակել հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի անունը։ Հեռանալով Նախիջևանից՝ նա չէր խորթացել իր ծննդավայրից, ընդհակառակը, մշտապես կապ էր պահպանում և լավատեղյակ էր Դոնի հայկական գաղութում կատարվող անցքերին։ Հայրենի քաղաքում լուսավորյալ դպրոց բացելու մտահոգությամբ նա մամուլի էջերում բարձրացրեց հնդկահայ վաղեմի կտակների խնդիրը և հանձն առավ ու գլուխ բերեց այդ դժվարին գործը։ Իր ծննդավայրի սոցիալ-տնտեսական ընդհանուր միջավայրը նախապես սնունդ տվեց Մ. Նալբանդյանի ըմբոստ ոգուն, հիմք հանդիսացավ նրա հեղափոխական-դեմոկրատական աշխարհայացքի համար, որը, ինչպես հայտնի է, վերջնականապես ձևավորվեց ռուս առաջավոր մտածողների գաղափարական ազդեցության տակ։

Տիրող կարգերի դեմ Մ. Նալբանդյանի ծավալած հեղափոխական պայքարը մեծ ազդեցություն գործեց և գաղափարական հիմք հանդիսացավ 1870—1880-ական թթ. Դոնի ավազանում հեղափոխական նարոդնիկական շարժման համար։ Ռոստով-Նախիջևանյան նարոդնիկական խմբակներում աչքի էին ընկնում Փեշեքերով եղբայրները, Մ. Կայալովը, Հ. Մանուչարյանը և ուրիշ-

28 Նույն տեղում, գ. 1830, թ. 379։
29 ՌՄՊԱ, ֆ. 91, ց. 1, գ. 940։
30 Նույն տեղում, ֆ. 91, ց. 3, գ. 405, թ. 9—12։

ներ, որոնց գործունեությունը նկատելի հետք է թողել հարավային Ռուսաստանի նարոդնիկական շարժումների պատմության մեջ[31]։

XIX դարի վերջերին, բանվորական շարժումների աշխուժացման հետևանքով Դոնում ստեղծվում են սոցիալ-դեմոկրատական մարքսիստական խմբակներ։ Այս շրջանից սկսած հեղափոխական պայքարի բոլոր փուլերում Նախիջևանը Ռոստովի հետ հանդես էր գալիս համատեղ, միևնույն կազմակերպության մեջ, որպես մի ամբողջություն։

Ռուսական առաջին հեղափոխությունը լայն արձագանք գտավ Դոնում։ Ուսանող երիտասարդության հեղափոխական շարժումը իր ոլորտի մեջ առավ նաև դեմոկրատական մտայնությամբ տոգորված Նախիջևանի թեմական դպրոցի աշակերտությանը, ուր ուսանում էին Դոնի սոցիալ-դեմոկրատական ասպագա հայտնի գործիչներ Ալ. Մյասնիկյանը և Ս. Սրապիոնյանը։ Միայն գեներալ-նահանգապետի միջամտությամբ է հնարավոր դառնում վերջ տալ աշակերտական այդ հուզումներին[32]։

Ռեակցիայի տարիներից հետո, 1910 թ. Դոնում գործում էին սոցիալ-դեմոկրատական խմբեր։ 1916 թ. ստեղծվում է Ռոստով-Նախիջևանյան բոլշևիկյան կոմիտեն, որը և գլխավորում է ցարիզմի դեմ աշխատավորության հեղափոխական պայքարը։

Նոր Նախիջևանի հայությունը ստեղծեց նաև բավական ուրույն մշակույթ, որը նշանակալից երևույթ էր հայ ժողովրդի լուսավորական և առհասարակ հոգևոր կյանքում։ Տակավին գաղութի սկզբնավորման օրերին Հ. Արղությանը Պետերբուրգից հատուկ զգուշացնում էր եկեղեցիներին և վանքին կից ընդարձակ տարածություն թողնելու մասին՝ այնտեղ դպրոց, տպարան և հարակից այլ հաստատություններ հիմնելու համար[33]։ Իրոք, հենց 1780-ական թթ. բացվում են մի շարք վարժարաններ։ Դրանցից Սուրբ Խաչ վանքի վարժարանը Գ. Պատկանյանը համարում էր առաջին հայկական գիշերօթիկ դպրոցը[34]։ Աշակերտները բնակվում էին վանքում և սնվում ու սովորում վանքի հաշվին։

1790 թ. Պետերբուրգից տեղափոխվեց և Ս. Խաչ վանքում հիմնադրվեց հարավային Ռուսաստանի առաջին տպարանը՝ Խալդարյան տպարանը։ Նախիջևանում այն գործեց հինգ տարի և իր հրատարակություններով կարևոր դեր կատարեց դպրոցները դասագրքերով ապահովելու, հայերին Ռուսաստանի պատմության ու մշակույթին ծանոթացնելու, նրանց մեջ ռուսական կողմնորոշումն ամրապնդելու խնդրում։ Այս շրջանում մանուկ սերնդի ուսուցման գործում, թարգմանական-հրատարակչական ասպարեզում արգասավոր աշխատանք էին կատարում Հ. Արղությանը, Թ. Մարուքյանը, Մարգար Խոջենց Երևանցին։ XIX դարի առաջին տասնամյակներից մանկավարժական-լուսավորական բեղուն գործունեություն ծավալեցին Սերովբե և Գաբրիել Պատկանյանները, Հ. Ալամդարյանը և ուրիշներ։

Բուրժուական հարաբերությունների զարգացումով խթանված հասարակական, մշակութային կյանքի զարթոնքը իր հորձանուտի մեջ է առնում նաև

31 А. Г. Терещенко, Новонахичеванцы в революционном народническом движении, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4։

32 «Մշակ», 1906, № 265, 277։

33 ՀԿՊՊԱ, ֆ. 54, գ. 2509, թ. 2։

34 «Արոր», 1911, № 4։

հայկական գաղութը։ Ճիշտ է, XIX դարի կեսերից վերացվում են Նոր Նախիջևանի և ռուսահայ մյուս գաղութների առանձնաշնորհումները, սակայն փոփոխված պայմանների թելադրանքով շուտով հիմնվում են ազգային-բարեգործական այնպիսի հաստատություններ, որոնք կոչված էին վարելու Դոնի հայ զանգվածի գործերը։ Դրա հետևանքով Նոր Նախիջևանը ոչ միայն չի դադարում հայկական մտավոր կենտրոն լինելուց, այլև այնտեղ ավելի մեծ չափով է առաջադիմում հայ հասարակական ու մշակութային կյանքը։

Նոր Նախիջևանում լուսավորյալ, ժամանակի պահանջները բավարարող ուսումնական հաստատություն ունենալու հարցը տեղի մտավորականությանը մտահոգել է տևականորեն։ Երկարատև նախապատրաստությունից հետո 1880 թ. բացվում է Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական դպրոցը, որը հայ պատանիների կրթության գործում արգասավոր դեր կատարեց։ Նույն տարում Ռ. Պատկանյանի ջանքերով բացվում է արհեստավորական դպրոցը, որը տալիս էր հանրակրթական գիտելիքներ և ուներ փականագործական, ատաղձագործական և կոշկակարական բաժիններ։ Շենքի մուտքի վրա գրված էին բանաստեղծի սիրած խոսքերը. «Բանուկ ձեռքը չի մուրալ»։ Անվանի գրողը, տեսնելով արհեստագործության դերի աստիճանական նվազումը. նման ձևերով փորձում էր գաղութի տնտեսական կյանքում վերականգնել արհեստների վաղեմի նշանակությունը։ 1882 թ. հանդիսավոր արարողությամբ բացվում է Գոգոյան հայ օրիորդաց դպրոցը։ Կարևոր էր նաև 1880-ական թթ. վերջերից Ս. Խաչ վանքում գործող ժառանգավորաց դպրոցը, որը կոչված էր հոգևոր գործիչներ պատրաստելու, սակայն առհասարակ Նախիջևանում ուսումնական հաստատությունները շեշտված աշխարհիկ բնույթ ունեին։ Դա, հավանաբար, գաղութի հասարակական-քաղաքական և տնտեսական հասուն կյանքի ազդեցության հետևանք էր։

Դոնի հայկական գաղութում բավական լայն զարգացում ապրեց մշակույթի կարևոր ճյուղերից մեկը՝ թատերական գործը։ Դեռևս 1880-ական թթ. Լազարյան ճեմարանի շրջանավարտներ Թ. Խաղամյանի, Ս. Տիգրանյանի և Մ. Քուշներյանի ջանքերով ներկայացումներ են կազմակերպվում և հիմք է դրվում ինքնագործ թատրոնին։ Հետագայում տեղում մշտապես գործող թատրոն կազմակերպելու և առհասարակ մշակույթի այս ճյուղի առաջադիմության գործում էական նշանակություն են ունենում Ադամյանի, Սիրանույշի, Արմենյանի, Աբելյանի և այլ հռչակավոր դերասանների պարբերաբար կազմակերպվող հյուրախաղերը։ Գ. Զուբարի, Ա. Խաղամյանի ջանքերով ստեղծվում է «Թատերական արվեստ սիրողների ընկերություն», որը մշտական ներկայացումներ է կազմակերպում։ 1890-ական թթ. կառուցվում է թատրոնի հարմարավետ շենք, որը կոչվելու էր Մ. Նալբանդյանի անունով, սակայն կառավարական արգելքներից խուսափելով անվանվում է «Հայրապետյան թատրոն»։

Գաղութի մշակութային կյանքին մեծապես նպաստում էին տեղի բարեգործական հաստատությունները, նրանց միջոցներով XX դարի սկզբներին Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում և արտասահմանում հարյուրից ավելի ուսանող էր կրթություն ստանում։ Նախիջևանի բարեգործական ընկերությունը հրատարակեց Մ. Նալբանդյանի երկերի երկհատորյակը, Ռ. Պատկանյանի եռահատորը։

Նախիջևանի Ս. Խաչ վանքը, որը հայկական մշակույթի կարևոր օջախ էր, միաժամանակ դարձել էր ազգային նշանավոր գործիչների մի յուրաքանչյուր պանթեոն։ Նրա բակում էին հանգչում հայ հասարակական-քաղաքական կյանքի և մշակույթի մեծ երախտավորներ Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Աբամդարյանի աճյունները։ Դոնի հայության հանգանակած միջոցներով 1901 թ. մահարձաններ են դրվում նրանց գերեզմաններին։ Հայ մեծ գործիչների մահարձանների բացումը վերածվում է հայ գրականության և մշակույթի ազգային հանդեսի[35]։

Հասարակական կյանքն աշխուժացնելու, ազգային մշակութային խնդիրների վերաբերյալ հետաքրքրություն շարժելու, հայ ղանգվածի առօրյան լուսաբանելու նպատակով հայկական թերթ ստեղծելու գաղափարը Նոր Նախիջևանում հասունացել էր դեռևս անցյալ դարի 70-ական թթ.։ Սակայն այդ ուղղությամբ կատարվող բոլոր փորձերը տարբեր առիթներով կառավարության կողմից մերժվել էին։ Միայն ռուսական հեղափոխության շնորհիվ երկրում ստեղծված իրավիճակը հնարավոր գարձրեց տասնամյակներ առաջ ունեցած մտահղացումն իրականացնել։ 1905 թ. սկսում են հրատարակվել «Նոր խոսք», «Նոր կյանք», «Դրիշ», «Գաղութ», «Լույս», «Մեր ձայնը» և տարբեր ուղղություններ ու խնդիրներ ունեցող շուրջ մեկ տասնյակի հասնող պարբերականներ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Դոնի հայությունը լծվեց սոցիալիստական շինարարության աշխատանքներին։ Նա, ռուսական միջավայրում աճած ու դաստիարակված իր լավագույն ղավակներին՝ կուսակցական ու պետական անվանի գործիչներ Ալ. Մյասնիկյանին, Ս. Լուկաշինին, հռչակավոր նկարիչ Մ. Սարյանին, տաղանդավոր ճարտարապետ Ալ. Թամանյանին, երաժիշտ Ա. Գաբրիելյանին, նշանավոր բժիշկների, դիտնականների, իրավաբանների ուղարկեց մասնագետների խիստ կարիք ունեցող Սովետական Հայաստան։ Վերջիններս անգնահատելի դեր կատարեցին հյուծված ու քայքայված երկրի, նորաստեղծ Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարության ասպարեզում։

АРМЯНСКАЯ КОЛОНИЯ НА ДОНУ

(К 200-летию основания Нового Нахичевана)

Доктор историч. наук В. Б. БАРХУДАРЯН

(Резюме)

В 1779 г. на правом берегу Дона, около крепости св. Дмитрия Ростовского (ныне г. Ростов-на-Дону) были основаны город Новый Нахичеван и пять армянских сел. Заселены они были армянами, переселенными из Крыма. Это массовое переселение армян проводилось под руководством А. В. Суворова. Указ Екатерины II от 14 ноября 1779 г. давал переселенцам значительные экономические и правовые привилегии. Они на десять лет освобождались от всех податей,от постоя, рек-

35 Այդ վանքում 1972 թ. բացվեց Հայ-ռուսական հարաբերությունների պատմության թանգարան։

рутства. Новонахичеванцам разрешалось вести свободную торговлю, учредить магистрат и вести дела на армянском языке на основе национальных правовых норм. Благодаря этим привилегиям и хорошим природным условиям Донского бассейна армяне достигли значительных успехов в развитии экономической жизни.

Донские армяне не теряли связей с родиной, участвовали в общественно-политической жизни России. В армянском поселении на Дону, как и в Новороссии в целом, не было крепостничества; это дало возможность свободного успешного развития не только экономики, но и общественной жизни и культуры. Достаточно сказать, что Новый Нахичеван дал таких деятелей, как революционный демократ М. Налбандян, выдающийся поэт Р. Патканян, всемирно известный художник М. Сарьян, и многих других.

Армянская колония Новый Нахичеван сыграла важную роль в развитии армяно-русских отношений, в общественно-политической и культурной жизни армянского народа.